МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

22, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **06.12.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի սեպտեմբերի 24-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապակարակվել է համակարգչային և ցանցային պարագաների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Գարանտ 24» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 02910767, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի 3-րդ նիստի արձանագրության 13-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 14-րդ կետով որոշվել է վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ 2024 թվականի նոյեմբերի 22-ի 4-րդ նիստի արձանագրության 1-ին կետով ամրագրվել է, որ Ընկերությունը ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր չի կնքել, ուստի նույն նիստի արձանագրության 2-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա Ընթացակարգի համապատասխան չափաբաժինը հայտարարել չկայացած:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «եթե ընտրված մասնակիցը

չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա **նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից**», իսկ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն «մասնակիցն ընդգրկվում է նշված (գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների) ցուցակում, եթե որպես **ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ